



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. ԲՈՅՋՈՅԱՆ

ԿՈՒԼՏ-ՔԱՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

374.1  
F-12

արակուրյան

Արդբառպատճի և արհմիության կենսվարչության

MAR 2010

374·1  
F-12

ՊՐՈԼԵՏԱՐԻԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՒԹՅՈՒՆ, ՄԴ-ԱՅՆ

Ա. ԲՈԲԱՍՅԱՆ

ԿՈՒԼՏ - ՔԱՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ ՑԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հրատարակություն Արդբնակիումօք Աշխիքության  
Կենտվաշության

ՕԵՐԵՎԱՆ

1931



26.02.2013

Տ. 575

ԱՐԴԻՔՆԱԿԿՈՄՇԵՒՆ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԲԱՆԿՈՄՆԵՐԻՆ  
ԽՄԲԿՈՄՆԵՐԻՆ ՑԵՎ ՑԵՂԿՈՄՆԵՐԻՆ

Պետքառի առարկան  
Դաշիլ. 6980 (բ)  
Գաղտնիք 6093  
Տեղադր. 1000



24/95.59

Սույն բրոշյուրը գրելիս մենք ոգտվել ենք ՀԱՄԿ-ի հրատարակած «Գրոֆմիտոթյունների կուլտ-քաղացխատանքների հերթական ինդիբները» գրքից և ՀԱՄԿ-ի բանաձեվերից ու վրոշումներից։ Բրոշյուրի նպատակն է հանրամատչելի կերպով բացատրել կուլտ-քաղացիորհարդների գործնական կազմակերպումը և նրանց իրնութերները կառուցողների պայմաններում։

Բրոշյուրում դրված կազմակերպչական սկզբունքները հիմնականում պարտադիր լինելով բոլոր կազմակերպությունների համար, այն չպետք է կիրառվի մենամիկորեն, տառացի կերպով, այլ յուր ձեւերով պետք է անպայման հարմարեցնել տեղական պայմաններին։ յենելով գործից հետագայում շոկել ու լրացնել այն։

Կուլտ-քաղացիորհուրդները մեղանում նոր կազմակերպություններ լինելով՝ գեռ կարու են ուսումնասիրության և հետագա մշակման։ Այդ միջոցով կվերացվեն այն սխալներն ու բացերը, վորոնք մեր պայմաններում անխռուսակելի յեն։

Վորպես ուսումնասիրության որյեկտ, ընտրվում է Հոերի ցանցի, Քիմչենի Ցեմշինի և № 5, № 37 բանկոմների կուլտ-քաղացիորհուրդները։

Կուլտ-սեկտորի վարիչ՝ Ա. ԲԱԲԱՍՅԱՆ

ՀԱՄԿԽ-ի հին, ոպորտունիստական զեկալաքառսրբյունը ջախչախելով և «Յերեսներս դեպի արտադրություն» հանրածանոթ լողունգի տակ վերակառուցելով իրենց աշխատանքները, արհեստական միությունները արհմիությունների կուլտուր-քաղաքական դաստիարակության բնագավառի առաջ ես դրել ես մի շարք նոր և լուրջ խնդիրներ: Այդ խնդիրները կատարելու համար վոչ միայն անհամապատասխան, այլև հնացածու անպետք են կուլտ-աշխատանքների նախկին ձեվերն ու մեթոդները, ինչպիսիք են գործարտեղումներին կից կուլտ-հանձնաժողովները, կուլտ-խմբակները, կուլտ-իմադորները և այլն, վորոնք իրենց առաջ դրել եմ նեղ ու սահմանափակ խնդիրներ թե կազմակերպչական և թե աշխատանքի բովանդակության տեսակետից:

Արհմիությունների վերակառուցման ներկա շրջանի կուլտուր-քաղաքական դաստիարակության և մասսայական աշխատանքների մարմինները հանդիսանուն են կուլտ-քաղիմորհուրդները:

Ի՞նչ խնդիրներ են դրված կուլտ-քաղիմորհուրդի առաջ:

Կուլտուրական-քաղաքական խորհուրդների հիմնական խնդիրն է քաղուսավորական և կուլտուրական աշխատանքների վճռական վերակառուցումը «յերեսով դեպի արտադրություն», դեպի սոցմբուժ, դեպի հարվածային բանվորը: Նա պետք է մասսաներին համախմբի սոցիստական հարցերի շարքական հարցերի շուրջը:

Նա պետք է սիստեմատիկ կերպով բացատրի լայն մասսաներին հնդույթակի խնդիրները, նրա տնտեսական

և քաղաքական եյությունն ու նշանակությունը, նրա առանձին ճյուղերի զարգացման ընթացքը: Միաժամանակ պետք է մասսաների ուշադրությունը կազմակերպի արդինալազմաների կատարման շուրջը, առաջ-միջն ու խթանը դառնա տվյալ գործարանի, տվյալ շնարարության և առանձին բրիգագի, առանձին ցեխի ու առանձին բանվորի պանների լրիվ կատարման գործում թե վորակի և թե քանակի աեսակետից:

Նախ պետք է վճռական պայքար մղի վնասարարության, թափթփվածության, պարագուրդների, կորզո-դականության, կորուստների և արտադրության այլ բացերի դեմ, տանելով կազմակերպված բացատրական-աղիտացիոն աշխատանք և կազմակերպելով մասսայական կուլտմիջոցառումներ, ինչպիսիք են սև դրամարկղներ, բրակի մուզեյներ, աղիտ-դատեր, արտադրական դատ և այլն:

Կուլտ-աշխատանքը պետք է պայքարի աշխատանքի կարգապահության ամբացման համար, հանուն աշխատանքի սոցիալիստական ձեվերի (սոցմբուժ, հարվածայինություն և այլն) ծավալման, միաժամանակ կադակերպելով ցուցահանդեսներ, կոնկուրսներ, յերեկույթներ և նման այլ միջոցառումներ:

Կուլտ-աշխատանքը պետք է պայքարի կուսակցության գլխավոր գծի համար: Նա պետք է միության անդամների լայն մասսաներին տա դասակարգային բարձր զիտակցություն և ինտերնացիոնալ դաստիարակություն, աշխատանք կատարի աղղային վոքրամասնությունների մեջ:

Նրա խնդիրներն են նաև արտադրական-տեխնիկական պրոպաղանդան—արտադրական-ներածական դաստիացներ, վորակալորման մասսայական աշխատանքը

Թեինիկական խմբակներ և այլն։ Պայքար կադրերի պատրաստման համար և պրոֆեսուավորության դործի կազմակերպում, ֆիզկուլտուրա և ռազմական պրոպագանդա, անդրագիտության վերացում, պարտադիր ուսում, պոլիտեխնիկացիա, յերեխաների կոմունիստական դաստիարակություն, պայքար նոր կենցաղի համար, միջոցառումներ կոլեկտիվ կենցաղ կազմակերպելու համար, հակակրօնական և հակաակոհիկ աշխատանք, սանիտարական լուսավորություն, դյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման աջակցություն և սրանցից բղխող այլ հարցեր։

Կուլտո-քաղխորհոգի աշխատանքները չեն սահմանափակվում բանվորների սպասարկումով միայն գործառանում, ակումբում և կարմիր անկյունում, այլ նրանք պետք ե ընդգրկեն բանվորական բնակավայրերը, բանվորական ավանները, հանրակացարանները և բարակները։

Կուլտո-քաղխորհուրդը հանդիսանում է ղեկավարող ծրագրային ոպերատիվ մարմին, վորը կատարում է Հիմնականում կուլտուրական-քաղաքական լուսավորության և ուսումնա-արտադրական ամբողջ աշխատանքը միանական պլանի հիման վրա։

Միասնական պլանը հիմնարկությունում կամ գործարանում կուլտաշխատանքներ տանող հասարակական և պետական բոլոր մարմինների կուլտո-կրթական գործունեյությունը միավորող կարեվոր միջոցառումն է, վորով վերացվում և զուգահեռականությունը կուլտո-քաղաշխատանքների մեջ, վերջ և տրվում ուժերի ու միջոցների ջատմանը։

ԿՈՒԼՏՈ-ՔԱՂԽՈՐՀՈԳԻ ԿԱՌԱՋՎԱԾՔՆԵՐԸ

Գործարաններում և հիմնարկներում կուլտուրական աշխատանքներ են տանում դիտական և հասարակական մի շարք մարմիններ ու կազմակերպություններ, որինակ, Լուսբաժին, Գործարտեղկոմ, ՄՈՊՐ, Մարտնչող Անաստվածների Ընկերություն, Պայշ-Ավագիմ և այլն։ Սրանք յերեմն միաժամանակ իրենց առաջ դնում են միատեսակ խնդիրներ։ յեթե նրանց աշխատանքները համակարգող մի մարմին չլինի, ուուրս կզա, վոր նրանք բոլորն ել նույն գործարանում միաժամանակ կըրազին նույն խնդիրներով և կստացիի անժամ, անձրագիր, զուգահեռ, անդամ մէկը մյուռին շանգարագող դործ, ուժեղի ու միջոցների ջատում։ Պարզ է, իրերի այս վիճակում ցանկալի արդյունք ստանալ չեկարելի։ Հետեղաբար պետք ե ընդունել կազմակերպչական այնպիսի ձեվ, վորը վերացնի նման զուգահեռությանը և համախմբելով կուլտո-աշխատանքների բոլոր հարավորություններն ու միջոցները, պլանավորի և գառնա ղեկավար ծրագրային-ոպերատիվ մարմին։

Այսպիսի մարմին ե հանդիսանում, ինչպես ասացինք, կուլտքաղխորհուրդը։

Կուլտո-քաղխորհուրդը կազմակերպվում է ղործառականում իից։ Նա հիմնարկությունում կամ գործառանում կուլտո-քաղաքական և կենցաղային աշխատանքը տանող բոլոր պետական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցչական մարմինն է։ Նա աշխատում և զործարտեղկոմի ղեկավարության ներքո։ Կուլտքաղխորհուրդն ունի պլանում, բյուրո, կուլտո-քաղմակերպիչ և սեկտորներ։

Կուլտքաղխորհոգի պլանումի կազմի մեջ վճռական ձայնի փրավունքով մտնում են հետեւյալ ներկայացուցիչները։

1. Գործարտեղկոմի կամ բանկոմի կուլտ-կազմակերպիչը:

2. Առանձին ցեխերի կուլտկազմակերպիչները.

3. Կուսրջի ներկայացուցիչները (բյուրոյի կուլտպրոցը).

4. Էկթեմ-ի ներկայացուցիչները.

5. Կուլտ-քաղխորհրդի սեկտորների կազմակերպիչները.

6. ՃՄ-ի ներկայացուցիչները.

7. Յենթաշեֆ զինվորական մասերի և հիմնարկների ներկայացուցիչները.

8. Բոլոր հասարակական կամավոր կազմակերպությունների ներկայացուցիչները (Պաշը-Ալիաքիմ, ՄՈՊ, Կորչի անդրադիտութ. ընկ., Մարտնչող Անասովածների ընկ., Գյուղի և քաղաքի գողման ընկ., Ռադիո-բարեկամների ընկ. և այլն):

9. Կոոպերատիվ բյուրոյի ներկայացուցիչը.

10. Ֆվյալ հիմնարկի հետ կապված բոլոր կուլտկենցաղային հիմնարկների ներկայացուցիչները (Դրադրոցներ, մանկապարտեզներ, մանկական մասուներ, բնակչարանային ակցիոներական ընկերություններ, բնակարանային կոոպերացիա և այլն):

11. Աղջային փոքրամասնությունների մեջ աշխատանք կազմակերպողը.

12. Կուսպրոֆիլարինետի վարիչը.

13. Գործարանային թերթի խմբագիրը կամ խըմբադրական կոլեգիայի նախագահը.

14. Կանանց պատգամավորական ժողովի ներկայացուցիչները:

Վերոհիշյալներից ներկայացուցիչներ տաղիս են միայն այն կազմակերպությունները, վորոնք տվյալ

Հիմնարկում կամ գործարանում ունեն իրենց բջիջները:

Ներկայացուցիչներին ընտրում են ներկայացուցիչներով կազմակերպությունները. ընտրությունը կատարվում է նրանց ընդհանուր ժողովի կամ բյուրոյի կողմէց: Այսպիսով, կուլտ-քաղխորհրդի պլենումի կազմը բաղկացած է լինում մոտ 25—35 և ավելի հոգուց:

Կուլտքաղխորհրդի նախագահը, վորագես կանոն, պետք է լինի կուլտկազմակերպիչը (կուլտաշխատողը), վորը միաժամանակ գործարտեղկոմի կամ բանկոմի անդամ և գառնում: Նա նախագահ է նաև կուլտքաղխորհրդի բյուրոյի:

Կուլտքաղխորհրդի ընթացիկ ոպերատիվ աշխատանքները տանելու համար պլենումն իր կազմից ընտրում է բյուրո՝ բաղկացած 5-ից մինչև 9-ը հոգուց:

Կուլտքաղխորհրդը բաժանվում է սեկտորների ըստ աշխատանքի առանձին բովանդակության, իսկ ամեն մի սեկտոր իր շուրջը համախմբում է կամավորակտիվ՝ վորագես բրիգադներ:

### ԿՈՒԼՏՔԱՂԽՈՐՀՐԴԻ ՍԵԿՏՈՐՆԵՐԸ

Կուլտկենցաղային և քաղլուսավորական աշխատանքներն ընդգրկում են բանվորի ամբողջ միջավայրը: Այդ պատճառով կուլտքաղխորհրդի առաջ դրված են բազմազան և ծավալուն խնդիրներ: Այդ անելու համար անհրաժեշտ է կատարել աշխատանքի խիստ բաժանում, վորի համար կուլտքաղխորհրդի միջից ընտրում է սեկտորներ, ամեն մի սեկտորի կազմում նշանակելով 3—5 հոգի: Սեկտորի ղեկավարը նշանակում է կուլտքաղմակերպիչները:

Սեկտորները հետևյալներն են.

ա) պլանային-կազմակերպչական սեկտոր.

- բ) ուսուցման սեկտոր .  
 գ) մասսայական աշխատանքների սեկտոր .  
 դ) կենցաղային աշխատանքների սեկտոր .  
 յ) տնտեսական-ֆինանսական սեկտոր .  
 զ) ֆիզկուլտուրայի և ռազմական աշխատանքների սեկտոր .

ե) գրադարանային սեկտոր :

Սրանք կազմում են իրենց աշխատանքների յեռամ-սյա և ամսական որացուցային ծրագրերը, վորոնք հաստատվում են կուլտքաղիսորհրդի բյուրոյի կողմից :

Նայած տեղական պայմաններին, սեկտորների թիվը կարելի յե կրծառել և կատարել սեկտորների միացում, որինակ՝ կազմպլանային և տնտեսական-ֆինանսական սեկտորները վերածել մի սեկտորի, գրադարանային և ուսուցման սեկտորը միացնել և դարձնել մի սեկտոր :

Սեկտորների պարտականությունները հետեւյալ-ներն են .

Կազմվանային սեկտոր .— Սեկտորների նյութերի հիման վրա կազմում ե կուլտքաղիսորհրդի միասնական պլանը : Կազմում ե վորակական և վիճակաղրական հաշվառում, ինֆորմացիա ու հաշվետվություն, յենելով ժիամանական պլանից, միասնական նախահաշվից և կուլտքաղիսորհրդի փաստական դործունեյությունից, կազմակերպում ե ռաշինալիքատորական միջոցառումներ կուլտքաղիսորհրդի ուսումնաարտադրական աշխատանքների բնագավառում : Բանվորների կուլտուրապարկման աշխատանքների բոլոր տեսակները և մեթոդներն ուսումնասիրելու համար մշակում ե հաշվառման ձևեր և կազմակերպում ե այլ գործը, ոգտագործելով տեղական և կենտրոնական կուլտորոֆկարինետ-

ները : Կազմում ե մասսայական քաղկամպանիաների լութացիկ հաշվառում և ինֆորմացիա : Կատարում ե կուլտուրապարկման աշխատանքների կուլտայի հաշվառում ու բաշխում : Կամավոր ակտիվիտից կազմակերպում ե ժամանակավոր բրիդագրաներ կուլտաշխատանքի առանձին ճյուղերն ստուգելու համար, որինակ՝ անգրագիտության վերացում, պարտադիր ուսում, գրադարանային աշխատանք և այլն :

Կենցաղային աշխատանքների սեկտոր .— Տանում ե կուլտաշխատանքներ վոչ միայն հիմնարկում կամ գործարանում, այլև բանվորների բնակավայրերում — բանվորական ավաններում, հանրակացարաններում, բարակներում, կոռպերատիվ բնակարաններում և այլն : Կազմակերպում ե բանվորների կանանց և նրանց ընտանիքի անդամների կուլտուրենցաղային սպասարկումը : Աջակցում ե մանկական սենյակների, մանկական ոջախների, մանկահարապարակների, մանկապարտեզների, մանկատների կազմակերպմանը և նախադպրոցական ու դպրոցական հասակի յերեխանների դաստիարակման և կուլտքաղիսումավորության գործին : Տանում ե կուլտքաղաշխատանք կենցաղային, արտադրական կոմունաներում և կոլեկտիվ ամառանոցներում : Տանում ե նոր կենցաղի պրոպագանդա : Կազմակերպում ե հինգերորդ որվա հանդստի կուլտուրապարկումը : Տանում ե կոռպերատիվ ագիտացիա, աջակցում ե ինայողական գործի զարդացմանը և անկանխավճար հաշվարկին :

Գրադարանային սեկտոր .— Կատարում ե գրադարանների և լրջիկ գրադարանների գրքերի կոմպլեկտավորում, լրացնում և նոր ընթացիկ գրքերով : Կազմակերպում ե գրքերը գեխերը տանելու և բանվորին հաս-

թնելու գործը, նույն և անում նաև բանվորների բարկավայրերի վերաբերմամբ։ Կազմակերպում և ընթերացողների համար տեղեկատու բյուրո։ Հրավիրում և ընթերցողների խորհրդակցություններ գրադարանները նրանց պահանջներին հարմարեցնելու նպատակով և անց և կացնում մասսայական այլ միջոցառումներ գրքի շուրջը։ Առաջ և մղում մասսաների մեջ արտադրական-տեխնիկական, պրոֆեսիոնալ և քաղմասսայական այլ գրականություն։ Կազմակերպում և ուսուցման և մասսայական աշխատանքների համար անհրաժեշտ դասադրքերի և պիտույքների սպասարկումը։

Մասսայական աշխատանքների սելլոր. — Տանում և արտադրական-տեխնիկական ագիտացիա, տանում և հնդիմյակի խնդիրները մասսայականացնելու և բացատրելու աշխատանք, սոցմըցման ու հարվածայնության հիման վրա մասսաներին մոբիլիզացիայի յի յենթարկում արդինալլաները կատարելու համար։ Տանում և հակարոնական և հակասակոհոլիկ պրոպագանդադարան։ Կազմակերպում և յենթաշեֆ մարմինների ու կազմակերպությունների կուլտքաղաքական սպասարկումը։ Ղեկավարում և եքսկուրսիոն (բացառությամբ ֆիզկուլտուրակայի) աշխատանքներն ու դասախոսությունները։ Տանում և քաղլուսավորության ագիտացիա։ Կազմակերպում և կուսակցության, խորհրդային իշխանության և արհմիությունների մարմինների համագումարների, կոնֆերենցիաների, խորհրդակցությունների վորոշումների ու բանաձեվերի մասսայականացման գործը։ Բացատրում և արհմիութենական շինարարության խնդիրները։ Տանում և ինտերնացիոնալ դաստիարակության և աղդային փոքրամասնությունների կուլտուրատիարակչական աշխատանք։ Կազմակերպում և

պարտավոր ուսման, պարուցների պալիակենիզայի, նոր սերնդի դաստիարակման, պիոներշարժման գործին բանվորներին մասնակից դարձնելու աշխատանքը։ Կադմակերպում և ղեկավարում և գեղարվեստական և մասսայական ինքնազործ աշխատանքները՝ կինո-թատրոն, յերեկույթներ, ինքնազործ յերեկոններ և այլն։ Տարածում և բանվորների մեջ թերթեր և ժուռնալներ։

Ֆիզկուլտուրայի և ուսմական աշխատանքների սեկտոր. — Կազմակերպում և ծավալում և ուսմական գործի ուսուցումը բանվորների մեջ, կազմակերպում և ուսմական անկյուններ և տանում և ուսմական պրոպագանդա։ Աջակցում և Պաջրավիճաքիմի կազմակերպություններին, հատկապես նրա բջիջների աշխատանքներին։ Կազմակերպում և Փիզկուլտուրայի բոլոր ձեվերը, տանում և Փիզկուլտ-ագիտացիա բանվորների, ծառայողների և նրանց ընտանիքի անդամների մեջ։ Կազմակերպում և քաղաքական դաստիարակման գործը Փիզկուլտուրնիկների մեջ։ Կազմակերպում և Փիզկուլտուրապարմունքներ, Փիզկուլտուրցումներ և խմբակային պարապմունքներ և այլն։ Կահավորում և Փիզկուլտուրայի և սպորտի տեղերը։ Ֆիզկուլտուրնիկներին կադմակերպում և համագաղաքային և գործարանային քաղաքական ու տնտեսական կամպանիաներին մասնակցելու համար։

Ուսուցան սեկտոր. — Կազմակերպում և բանվորների վորակը բարձրացնելու դասընթացներ, պրոֆետեխնիկական դպրոցներ և դասընթացներ, պրոֆկարբերի դասընթացներ, առաջ քաշվածների դասընթացներ, բանֆակների ու բարձրագույն դպրոցների նախա-

պատրաստական գասընթացներ, հնուակա ուսուցում և այլն: Կազմակերպում և պրոֆանդրագիտության վերացման և պրոֆլուսավորության մասսայական գործը: Կազմակերպում և քաղղորֆարտադրական և հանրակերթական ուսուցման բոլոր ձեմքերը և մեթոդները, որինակ՝ խմբակներ, դասընթացներ, բանվորական դպրոցներ, կոնսուլտացիաներ դպրոցների հարվածայինների, դյուտարաբների, պրոֆակտիվի, արձակուրդավորների համար, արտադրական ներածական դասընթացներ և այլն: Կազմակերպում և քաղաքական և պրոֆ-տեխնիկական լուսավորության, տեխնիկական գիտելիքների տարածման գործը, տանում և Մարքս-Լենինյան թեորիայի մասսայականացման աշխատանք խմբակային, կոնսուլտացիոն, լեկցիոն և այլ պարապմունքների միջոցով:

Ֆինանսական սեկտոր.— Ի մի յե հավաքում և կենտրոնացնում տվյալ գործարանում կամ վայրում կուլտ-կենցաղային աշխատանք տանող բոլոր կազմակերպությունների ֆինանսական միջոցները և հնարավորությունները, կազմում և տվյալ գործարանում տարվելք կուլտքաղաշխատանքների ծախսերի և յեկամուտների միասնական նախահաշվիվ: Միասնական նախահաշիվը ճշտիվ կատարելու վրա ունենում է հսկողություն, կազմում և ֆինանսական-տեղեկատու հաշվետպություն: Վորոշում և ակումբների, կարմիր անկյունների շենքերի ոգտագործման, գույքի և կահույքների պահպանման կարգը: Կուլտքաղխորհրդի հանձարարությամբ կնքում և պայմանագրեր, հետազայում բանկոմի կողմից հաստատվելու պայմանով:

Այսպիսով տեսնում ենք, արհետությունների կուլտ-

քաղկենցաղային աշխատանքներն առաջվա նման (ՀԱՄԿՆ-ի հին ղեկավարության որոք) չեն սահմանափակվում վորոշ ներ չըջանակներում, կամ կուլտուրական վորոշ ձեռնարկներում, ինչպես ակումբում, կարմիր անկյունում միայն, այլ ծավալվում են կուլտուրական և կենցաղային հեղափոխության ամբողջ ֆրոնտով, սպասարկում և ընդդրկում են պրոլետարական դասակարգի բովանդակ միջավայրը—արտադրական, կենցաղային, քաղաքական, կուլտուրական, տնտեսական և պրոլետարական հեղափոխության բոլոր ինդիբները:

### ԲՐԻԳԱԴՆԵՐ

Կուլտքաղխորհրդի սեկցիաները կազմակերպում են բրիգադներ իրենց գործունեյության բնագավառին վերաբերող աշխատանքներն ստուգելու, հետազոտելու կամ սեկցիայի հանձնարարությամբ հատուկ թեմատիկ խնդիրներ կատարելու համար: Բրիգադները թեսվետ և աշխատանքի հիմնական ձեմքերից են, բայց առանձին գործողությունների բրիգադները մշտական չեն: Նրանք կազմակերպվում են ամեն ղեպօտմ հատուկ նախակով և գործում են մինչև այն ժամանակ, քանի դեռ չեն կատարել կամ ավարտել իրենց առաջ դրված նպատակը: Այդ նշանակում ե, վոր դրված նպատակը կատարելուց հետո նրանք, վորպես բրիգադ, ցրվում են:

Բրիգադները կազմվում են կամավոր կուլտակտիվից: Նրանց թիվը չի սահմանափակվում, այլ, ընդհակառակը, սեկտորները պետք ե զիծ վերցնեն ակտիվ բանվարների, հատկապես հարվածայինների լայն մասսաներին ներգրավելու բրիգադների մեջ:

Կուլտքաղխորհրդին իր համապատասխան սեկտորի (կազմակերպության) միջոցով և առանձին սեկտորները կա-

ապառւմ են կուլտակտիվի ճիշտ և ուշադիր հաշվառում։  
Յեթև առանձին բրիգադներ թեմատիկ հանձնարարությունները կատարելուց հետո ցրված են համարվում, վորագես բրիգադ, ապա նրանք, վորսկես կուլտկամավոր ակտիվ, մնում են համախմբված կուլտքաղխորհրդի և նրա սեկտորների շուրջը։

Պարզ է, յեթե կուլտքաղխորհրդի պլենումի անդամ  
կարող են լինել միայն կաղմակերպությունների կողմից  
նշանակված կամ ընտրված ներկայացուցիչներ, իսկ  
բյուրոյում և սեկտորներում ընտրվում են միայն կուլտ-  
քաղխորհրդի պլենումի անդամները, ասպարությունները  
նշանակվում են կամավոր ակտիվից իրենց ցան-  
կությամբ, վորոնց թիվը, ինչպես ասացինք, չեն սահ-  
մանափակվում:

Այս նշանակում ե , վոր կուլտքաղիսորհցդի կազմակերպչական հիմնական սկզբունքներից մեկն ել այն ե , վոր նրա գործունեյությանը մասնակից են արվում բանվորական լայն մասսաները : Մասսաների միջոցով աշխատանք ե տարկում մասսաների մեջ , համակարգված աշխատանքի կազմակերպված բաժանում կատարելու միջոցով :

Բրիգադների թիվը և տեսակները (ըստ բնագավառների) տեղական պայմանների համար կարող են փոփոխվել. ներքեվ բերում ենք միայն որինակելի ձևը:

Կազմ-պլանային սեկտորն ունենում է հետևյալ բրիգադները.—1. միանական պլան կազմող բրիգադ, 2. աշխատանքի ուսումնասիրության և հաշվառման աշխատանքների, հաշվետվություն և ինֆորմացիա կազմող բրիգադ, 3. կուլտ. և քաղաքիտ. ուժերի հաշվառման և բաշխման բրիգադ, 4. կուլտուաշխատանքի առան-

Ճի՞ն ճյուղերն ստուգով բրիգադ, 5. կազմակերպչական  
խնդիրն ուսումնասիրով և կարգավորով (ռացիոնալաց-  
ման) բրիգադ :

Աւագման սեկոնդի բրիգադները՝ 1. անդրադիտության և կիսադրագիտության վերացման, 2. պրոֆտեխնիկական և քաղաքական լուսավորության, 3. պրոֆկազմութիւնի պատրաստման, 4. բանֆակի և բարձրագույն դպրոցների համար ըանդուրական նախագալարապահական դասընթացների, 5. ինքնուսուցման և հեռակառուցման գործի կազմակերպման բրիգադ:

Մասսայական աշխատանքների սեկտորի բրիգադ-ները՝ 1. համազումարների, կոնֆերենցիաների վորո-չումների մասսայականացման, 2. ինտերնացիոնալ դաստիարակության, 3. հնդամյակի, սոցմքցման, Հար-վածայնության և արդֆինանսների կատարման պրո-պագանդայի, 4. արտադրական-տեխնիկական իններ-ների պրոպագանդայի, 5. Տակալորոնական և հակաալ-կոհուլիկ ըլլորդագանգայի, 6. պարտադիր ռւոման, դըպ-րոցների պոլիտեխնիկացիայի, մանուկների դաստիա-րակման գործի կազմակերպման, 7. երսկուրսիաների ու դասախոսությունների կազմակերպման, 8. շեֆական աշխատանքների, 9. մասսայական գեղարվեստական և ինքնազործ աշխատանքների, 10. թերթի և ժուռնալ-ների տպարածման և 11. աղջային փոքրամասնությունների մեջ աշխատանք կատարող բրիգադներ:

Կենցարային աշխատանքի սեկտորի բրիգադներ ...  
1. Կուլտ-կենցարային աշխատանքեր բանվորների և  
նրանց ընտանիքի անդամներ ԱՐԱՐԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՐԵՐԻ  
կուլտապասարկության կազմակերպություն, 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ

պրոպաղանդայի, 4. խնայողական գործի ծավալմանն աջակցելու և անտնտես ծախքերի դեմ սպայքարելու, 5. բանվորական ավաններում, բնակարանայն կոստերատիվներում և կենցաղային կոմունաներում կուլտուրասրկումը կաղմակերպող բրիգադներ :

Ֆին-տնտեսական սեկտորի բրիգադներ.—1. Միասնական նախահաշխիկ կազմող, 2. կուլտուրաշխատանքի միջոցները համախմբող, 3. միասնական նախահաշխիկ ճիշտ ծախսման վրա հսկող, 4. Փինանսական-տեղեկատու հաշվետություն կազմող, 5. գույքի կահավորման և շենքերի հսկողության բրիգադներ :

Ֆիզկուլտուրայի և ռազմական աշխատանքների սեկտորի բրիգադներ.—1. Ֆիզկուլտուրայի և սպորտի ուղղերի կահավորման, 2. Ֆիզկուլտուրայի պրոպաղանդայի, 3. Փիզկուլտ-պարապմունքների և խմբակների յելույթների կազմակերպող, 4. Պաշրասփիաքիմի աշխատանք. ոգնող, 5. ռազմական գործի արտադրական ուսուցման, 6. Փիզկուլտուրայի մասսայական աշխատանքների (եքսկուրսիա, զբոսանքներ և այլն) բրիգադներ :

Գրադարանային աշխատանքների սեկտորի բրիգադներ.—1. Գրադարանի և ՄԱՅԿ գրադարանի գրքերի կոմպլեկտավորում, 2. գրքերի փոխադրում բանվորների բնակավայրերը (բարակներ, հանրակացարաններ և այլն), 3. պրոֆեսիոնիկական և քաղմասսայական գրականության տարածումը մասսաների մեջ, 4. տեղական աշխատանքների և ընթերցարանների բրիգադներ :

## ՆԻՍՏԵՐ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կուլտքաղխորհրդի կազմակերպչական կառուցվածքը, նրա խնդիրները բացատրելիս, պարզվեց, վոր նրա աշխատանքները հաջող տանելու գրավականն աշխատանքի խիստ և ծիշտ բաժանումից ե կախված։ Բայց այդ բավական չե։ Անհրաժեշտ է, վոր այս կամ այն կոնկրետ հարցերը քննվեն և ուսումնասիրվեն իրենց ամրողությամբ և մանրամասնություններով, աշխատանքի այս կամ այն բնագավառը հետազոտվի իր կոնկրետ տվյալների հիման վրա։ Հասկանալի յե, վոր այդ բոլորը նույնքան անհրաժեշտորեն պահանջում են, վոր կուլտքաղխորհրդի պլենումը, նրա բյուբն, սեկտորներն ու բրիգադներն ունենան սիստեմատիկ և պարբերական նիստեր ու խորհրդակցություններ։

Պլենումը նիստեր պետք է ունենա ամսական մի անգամմից վոչ պակաս։ Նա քննության և յենթարկում կաղմակերպչական, պլանավորող, համակարգող, սկզբունքային, ֆինանսական և տնտեսական հարցերը, լառմ և քննում և բյուրոյի և սեկտորների գործունեյության հաշվետվությունը, քննում և հաստատում ե նրանց աշխատանքների ծրագրերը և այլն։ Ընտրում և բյուրո և սեկտորների կուլտկազմակերպիչներ։

Կուլտքաղխորհրդի բյուրոն նիստեր և ունենում առանուրյակում մի անգամմից վոչ պակաս, նա քննում և պարբերակիվ-գործնական հարցեր։

Սեկտորները գրավիրում են կամավոր ակտիվի խորհրդակցություններ ամսական յերկու անդամից վոչ պակաս, քննում են ընթացիկ գործնական հարցեր։

Անհրաժեշտ և այդ նիստերն ու խորհրդակցու-

Թյունները ճիշտ ժամկետին կայացնել նաև այս տեսակտից, վոր կուլտքաղխորհրդի աշխատանքները մեղանում դնու նոր սկսված լինելու պատճառով՝ պրոֆակտիվը գեռ բավարար փորձ չունի, իսկ խորհրդակցությունները մասամբ դպրոցի դեր կիսաղան և տեղի կուննա փորձի փոխանակություն բրիդադների և սեկտորների միջն։

Կուլտքաղխորհրդի պլենումը պետք է հաշվեսկություն տա.

ա) ընդհանուր և ցեսային ժողովների առաջ առնվազն 6 ամիսը մեկ անգամ, բ) բանկոմի առաջ՝ առնվազն 3 ամիսը մեկ անգամ, գ) պլենումի կաղմի մեջ մտած կարմակերպությունների առաջ՝ նրանց ներկայացուցիչների միջոցով՝ առնվազն 3 ամիսը մեկ ա՛ դամ և դ) շրջանային կուլտ-շնարարության խորհրդի առաջ՝ առնվազն 6 ամիսը մեկ անգամ։

Կուլտքաղխորհրդին զեկավարում ե բանկոմը (գործարտեղկոմը), հետևաբար կուլտքաղխորհրդի պլենումը հաշվետու յե նրա առաջ։ Բյուրոն յենթակա յե հաշվետու պլենումի առաջ, սեկտորները յենթակա յեն և հաշվետու բյուրոյի և նրա միջոցով պլենումի առաջ։ Կուլտքաղխորհրդին զեկավարում ե բանկոմի (գործարտեղկոմի) կուլտ-կազմակերպիչը։

Ակումբների և հիմնարկների կուլտ-քաղխորհուրդներն իրավական մարմինների իրավասությունից չեն ոգտվում, այլ իրավաբանական իրավասության հետ կազմած բոլոր հարցերը կատարվում են արհմիության համապատասխան մարմինների միջոցով։ Կուլտ-քաղխորհուրդն իրեն հատուկ վերստուգիչ հանձնաժո-

ղովներ չունի։ Նրա դորձերի ստուգումը կատարում են բանկոմների և արհմիության վերստուգիչ հանձնաժողովները։

### ԿՈՒԼՏ-ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՑԵԽԵՐՈՒՄ

Ցեխներում կուլտաշխատանքները կազմակերպելու, ցեխների կուլտարահանջները հաշվի առնելու և բավարարելու համար նշանակվում են ցեխային կուլտկազմակերպիչներն իրենց շուրջն են համախմբում ցեխի կուլտակտիվին և նրան ոգտագործում են կուլտաշխատանքների առանձին բնագավառներում, որինակ՝ անգրագիտության վերացում, գրադարանային աշխատանք, քաղաքացիության վերացում, գրադարանային աշխատանք, քաղաքացիության վերացում։

Ցեխների կուլտ-կազմակերպիչները հանդիսանում են հիմնարկի կուլտքաղխորհրդի մարմինները, և նրանց աշխատանքները բղխում են կուլտքաղխորհրդի միասնական ծրագրից։ Ցեխների կուլտկազմակերպիչները ցեխներում կուլտաշխատանքները կազմակերպելուն զուգընթաց, մասսայականացնում են ցեխում կուլտքաղխորհրդի միասնական ծրագիրը և նրա կուլտքաղ-աշխատանքների միջոցառումները։

Այսուեղ, վորտեղ ցեխները փոքրաթիվ են իրենց բանվորների քանակսկզբան թվով և ցրված են, ինչպիսին են շինարարության վրա աշխատող կառուցղները, նպատակարմարներ և բնարել բարակների կուլտ-իփագորներ՝ ցեխների կուլտկազմակերպիչների Փունկցիաներով։

Այսուեղ, ուր կան խմբերումներ և վորոնց միավորած շինարարությունների թիվը միքանիսն ե, և անջատու-

հեռու յեն մեկը մյուսից, անհրաժեշտ և խմբկոմին կից կաղմակերպել կուլտ-քաղաքորհուրդ, իսկ առանձին շենարարություններում ունենալ կուլտ-կաղմակերպիչներ ցեխային կուլտկաղմակերպիչների պարտականություններով:

### ՄԻԱՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Կուլտքաղիսորդի միասնական պլանը կազմվում է հիմնարկի արդֆինալանների և կադրերի պատրաստման պլանի հիման վրա: Նա հիմնական խնդիր է դնում աղաճովելու այն պայքարի հաջողությունը, վորք մղում են մասսաներն արդֆինալանների և հանդիպական պլանների թե՛ քանակական և թե՛ վորակական կտառարման համար: Նա միաժամանակ ընդդրկում է կուլտուրական հեղափոխության խնդիրների կատարման հիմնական ձեռնարկումները, ինչպիսիք են, որինականը բարդադիտության վերացումը, պարտադիր ուսումը, պոլիտեխնիկացիան, կուլտուր-կենցաղային աշխատանքը, քաղլուսավորությունը և այլն:

Կուլտքաղաքական աշխատանքների միասնական պլանը, բացի վերև հիշված խնդիրներից, նպատակ է դնում միացնելու հիմնականում կուլտուժերն ու միջոցները, համաձայնեցնելու նրանց գործողությունները:

Միասնական պլանը կաղմվում է այդ կաղմակերպությունների պլանների հիման վրա, վորոնք ընդդրելում են իրենց մեջ վերև բերված հիմնական սկզբունքները: Միասնական պլանն իր հիմքում ունի այն սկզբունքը ևս, վոր կատարում է աշխատանքի վորոշակեաժանում կուլտաշխատանք կատարող և կուլտքաղությունների կաղմում մտած կաղմակերպությունների մի-

ներ: Այդ նշանակում է, վոր միասնական պլանի սահմաններում նրանք չեն կորցնում իրենց կաղմակերպչական և գործունեյության ինքնուրույնությունը: Նրանք հավաստրագիր պատասխանատու յեն կուլտքաղիորդովի և իրենց պլանի կատարման համար:

Միասնական պլանն իր բաժիններում նախատեսնում է բանկուրների առանձին խմբերի կուլտուր-քաղաքական և արտադրական պահանջների սպասարկումը (նոր կաղրերի, հարվածայինների, կանանց, ազգային փոքրամասնությունների և այլն):

Միասնական պլանը կաղմվում է հետեւյալ կարգով: Յենելով վերագաս մարմինների գիրեկտիվներից, կուլտիվորհրդի բյուրոն մշակում և կուլտ-քաղաքական աշխատանքի խնդիրները, վորպես պլան ուղարկում է ունկատորներին և կուլտքաղիորհրդի մեջ մտնող կաղմակերպություններին: Նրանք քննելով այդ, կատարում են անհրաժեշտ լրացումներ և իրենց նյութերն ուղարկում են բյուրոյին, վորն ակտիվի հետ մշակում և պլենումի նիստում և ուղարկում ցեխերը՝ քննելու համար: Նրանց հավանությունը կամ հանդիպական պլաններն ստանալուց հետո վերջնականացնեն հաստատվում են միասնական պլանը: Այսպիսով, մասսաների մասնակցությունը և վերահսկողությունը միասնական պլանը կաղմելու գործում աղաճովելու և:

Միասնական պլանը կաղմվում է վոչ պակաս, քան յեռամսյա ժամկետներով: Պլանի ժամկետը լրանալուց հետո կուլտքաղիորհուրդներն առանց սպասելու վերագաս ղեկավար մարմինների պահանջին, կաղմում են արդյունքների հաշվառումը և հաշվետվություն են ներկայացնում բանկոմին (գործարկոմին), ըջանային

կուլտէնաբարության խորհրդին և միության կենա-  
վարչության կուլտոսեկտորին:

### ԱԿՏԻՎԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Կուլտֆաղիսորհուրդները մեղանում դեռ նոր Են  
Հազմակերպվում: Մեր պրոֆակտիվը դեռ փորձ չունի  
արդ ասպարեզում: Դեռ չունենք պատրաստված կուլտ-  
կազմակերպիչներ բանկոմներում: Իսկ հին ձևերով  
կուլտաշխատանքներ տանելն անհանգուրժելի յի:  
Կուլտակտիվ պատրաստելու համար կոլեկտիվներում և  
ակումբներում պետք ե կազմակերպել սեմինարիաներ,  
կարճաժե դասընթացներ:

Երջանային արհմիությանների խորհուրդներին կից  
անհրաժեշտ ե կազմակերպել կոնսուլտացիաներ, պրոֆ-  
կաբինետներ, իսկ գործարկումները պետք ե կազմակեր-  
պեն կուսպրոֆիլարինետները: Անհրաժեշտ ե նաև կա-  
տարել փորձի փոխանակություն արդեն կազմակերպ-  
ված և ձևավորված կուլտքաղիսորհուրդների՝ փոխա-  
դարձաբար կատարելով աշխատանքների ստուգումներ  
և ուսումնասիրությունները: Այս միջոցառումներով  
հնարավոր կլինի ապահովել անհրաժեշտ քանակի և վո-  
րակի կուլտակտիվ, առաջ քաշելով նրանց հարկածա-  
յին և ակտիվ բանվարժներից:

Միաժամանակ պետք ե կամավոր հասարակական  
կազմակերպություններին աջակցել նրանց բջիջների  
կազմակերպման գործում: Շատ տեղերում չկան այդ  
բջիջները կամ թույլ են աշխատում: Այս ևս պատճառ  
և գառնում կուլտքաղիսորհուրդների թույլ աշխա-  
տանքին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0238030

52. 575

ԳԻՒՆԸ 15 ԿՈՊ.

1932/123